ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան 27 փողոց 7/6
հեռ. /0322/- 68781

# ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2014 թվականի N29 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-041-0202-0139 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ ՓՈԽԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, և ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 6-րդ հոդվածի 27-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի վարչական տարածքում, 06-041-0202-0139 կադաստրային ծածկագրում գտնվող, Մկրտիչ Արայիկի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1143 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը քարի արտադրամաս կառուցելու նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ՍԵՐՅՈԺԱ ԱՐԱՔՅԱՆ | | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | | | |
| ԱՐԿԱԴԻ ԱՐԱՔՅԱՆ | | | |
| ՖՐՈՒԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |

Համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Արաքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան 27 փողոց 7/6
հեռ. /0322/- 68781

# ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2014 թվականի N30 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՏԱՌԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 24.06.2014թ. թիվ 67 դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Փոխել Լեռնապատ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, Գրիշա Շահենի Ղարաղաշյանին և Վարդուհի Դավթի Պապինյանին սեփականաշնորհված սակայն քարտեզագրման սխալի արդյունքում որպես պետական սեփականության անտառ հանդիսացող 0.2351 հա անտառի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական խոտհարքի՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱՋՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԿԱԴԻ ԱԲԱՋՅԱՆ | [signature] | | |
| ՖՐՈՒԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Սարիբեկ Աբազյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ
..........Ս. ԱԲԱՋՅԱՆ
Կ. Տ
__________2014թ.

# ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՐԻՇԱ ՂԱՐԱՂԱՇՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.23515 ՀԱ ԱՆՏԱՌԸ ԳՅՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ:

_______Լոռու________ (Մարզ)
_________Լեռնապատ_________ (Համայնք)
_________________ (Հասցե)

Մ ասշտաբ1:1000




| Մակերեսը (հա.) | 0.23515 (հա.) |
|---|---|
| Ծածկագիրը | 06-041-0217-0001-hg |
| Նպատակային նշանակությունը | |
| Գործառնական նշանակությունը | |
| Հողամասը ծանրաբեռնված է | |

| | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափերը | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի)անուն ազգանունը(անվանումը) | Համարը, ըստ հողամասի հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 8448501,5590 | 4521696,0804 | 35,93 | համայնք | | | 1 | | | |
| 2 | 8448518,6948 | 4521727,6647 | 30,00 | համայնք | | | 2 | | | |
| 3 | 8448524,6768 | 4521698,2672 | 20,82 | համայնք | | | 3 | | | |
| 4 | 8448545,3881 | 4521696,1596 | 7,12 | համայնք | | | 4 | | | |
| 5 | 8448552,3008 | 4521694,4361 | 35,10 | ճանապարհ | | | 5 | | | |
| 6 | 8448581,9923 | 4521675,7199 | 22,83 | ճանապարհ | | | 6 | | | |
| 7 | 8448598,4903 | 4521659,9398 | 20,39 | համայնք | | | 7 | | | |
| 8 | 8448586,9334 | 4521643,1392 | 54,36 | ճանապարհ | | | 8 | | | |

|  | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափերը | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի)անուն ազգանունը(անվանումը) |
|---|---|---|---|---|
| 9 | 8448541,6419 | 4521673,2021 | 16,49 | ճանապարհ |
| 10 | 8448526,9071 | 4521680,6154 | 10,56 | համայնք |
| 11 | 8448519,0221 | 4521687,6471 | 4,11 | համայնք |
| 12 | 8448517,1245 | 4521684,0018 | 7,97 | ճանապարհ |
| 13 | 8448509,5962 | 4521686,6079 | 6,02 | ճանապարհ |
| 14 | 8448504,8564 | 4521690,3145 | 6,64 | ճանապարհ |



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան 27 փողոց 7/6
հեռ. /0322/- 68781

## ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2014 թվականի N 31-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով, ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման դրույթներով Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Լեռնապատ գյուղի Հողային հաշվեկշիռը 01.07.2014թ. դրությամբ համաձայն 22 և 22ա ձևի:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱՋՅԱՆ | | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | | | |
| ԱՐԿԱԴԻ ԱԲԱՋՅԱՆ | | | |
| ՖՐՈՒԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |

Համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Աբազյան